

Թաւրիզում 20 դրան
Գաւառներում 25 դրան

ԱՐՏԱՍՍԱՆՆԵՐ

Ռուսաստան 5 ռբ.
Թուրքիա 50 դրան
Եւրոպա 14 ֆրանկ
Ամերիկա 2,50 տոլ.

Յայտարարութիւններ վճար

Առաջին երեսով տպագրող 20 տանի

Չորրորդ 10 ..

Առաջին 40 րոպէս 6 ցուշի

Խմբագրութեան հասցեն՝ Թաւրիզ

Միջոցաւ խմբագրութեան կամ Tauris Perse

Rédaction du journal arménien „MITK“

== Adresse télégraphique-Tauris „MITK“ ==

ՄԻՏԿ

ՀԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍՈՒՄԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

اداره روزنامه میطک

Propriétaire & Editeur en chef
Al. Der-Vartanian

TERMS OF SUBSCRIPTION

for a year payable in advance 10 krana.

Foreign Dollars \$ 50

RATES OF ADVERTISEMENTS:

one printing line on the 1-st page 10 cen.

„ „ „ „ 4-th „ 5 „

15% discount for annual subscription paid in advance. Address

Rédaction „MITK“
Tabriz, Persia

4. ՏԱՐԻ № 21 (41) ԹՄԻՐԻԶ, ՀԱՐԱԹ 14 ՅՈՒՆԻՍ 1914 Թ. Tauris, Samedi le 27 Juin 1914 № 21 (41) Vol. III

Требуйте и курите папиросы только

М. Д. „Эр. Сейлановых“

Египетскія, Ирисъ, Прима, Паросъ, Орелъ
и Марсъ.

продаются во всѣхъ магазинахъ

ՇՆՈՐՀԱԿԱՆԻՔ

Յօդուտ «Միտք»-ի խմբագրութիւնս շնորհակալութեամբ պ. Կարապետ Արզումանեանից նուէր է ստացել 150 դր. Որքան ունենաւ իր կողմէն, որ կարող էին նման նուէրներով թիթեակներ մեր ժողովրդանուէր գործի ծանրութիւնը և խոշոր պարտքերը:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Մնաց 9 համարի որ լրանայ «Միտք»-ի Գ. չորանի բաժանորդագրութիւնը, այնպէս ինչպէս ցարդ մենք Թէրանի մեր յարգելի բաժանորդներին ունէ զրամ չենք ստացել: Խնդրում ենք այդ զրամները, եթէ զորակալը գրաւմունքի պատճառով չի հասնում գանձելու, անմիջապէս իւրաքանչիւր խմբագրութեան մեջ հասցնի ուղղակի, որ գտնէ չենշուենք պարտքերի ծանրութեան ներքոյ Թող նոյնն անէ և Ուրմին, որտեղից բաժնեկցների կէտից աւելին մեզ հասցուած չէ:

ԱԶԳԱՅԻՆ ՄՈՒՐԱԿՈՅՏԸ

ԱՆՀԵՏԱՑՈՂ ԷԶՄԻԱՍԻՆԸ

(Սեփ. թղթակցից)

26 Մայիս Ս. Էջմիածին

Տէր խմբագիր.

Էջմիածնում տիրող դրութիւնը, ընթացիկ գործերն ու բոլոր իրադարձութիւնները, գրում էք, բազմակողմանիօրէն «Միտք»-ի էջերում արտացոլելու համար, անհրաժեշտ էք համարում տեղին Ձեր թղթակցների շարքում տեսնել և ինչ:

Ուրախութեամբ ստանձում եմ այդ պաշտոնը, լուսավոր որ ուժգնորէն դէպք գլորում դիմող Էջմիածինը հնար լինի կանգնեցնել և սթափեցնել, նրա մասին անգաղութում խօսելով և անաչառ մտմով հզօր ոյժին դիմելով:

Սակայն առաջին անհաճոյ հարցը, որ ցնւում է մի թղթակցի առաջ՝ այն է, թէ ինչ գրէ նա Էջմիածնից և ինչից ոկէ:

Եւ, իրօք, ինչ գրեմ Էջմիածնից, եթէ էն ջուրն է, էլի էն ջաղացը: Եթէ էն տաշտը, էլի էն տաշտակը, ինչպէս ամիմ է ժողովրդական առածը:

Հազար ափսոս հայի դէպք Էջմիածինը տաժաժ մաքուր ու լաւագոյն զգացումներին: Այստեղ իշխողներից և գրութեան տերերից ոչ ոք չէ մտածում, որ սա (Էջմիածինը) հայութեան պատմի, գոյութեան և բարձրացման վեհագոյն գրօշն է, որը պէտք է աշխատեն բարձր պահել իրենց կենցաղով: Միաբանական սիրով, անգուլ աշխատանքով և հաւատարմ ծառայութեամբ:

Խայտաղէտ, անյարիւր և անմիաբան անձանց մի տարօրինակ խառնուրդ ընկել է այստեղ, ինքն էլ չիմանալով թէ ինչ իղէալի է ծառայում, ուսելով ազգի հացը և վայելելով չաղ-չաղ ոտքիկներ:

Սակաւներն էլ, որ ունին իղէալ, կոչում, հուր՝ իրենց ներսում և հաւատ իրենց սրտում, հայոց արգարութեան այս կենտրոնում մնում են հայաժողով:

Պետք ինքը, որ ուղղութիւն, գոյն

ու կերպարանք պէտք է տար «միաբանութիւն» անունը կրող այս յոյժ անմիաբան. ժաշրափրո և տարօրինակ խմբակցութեան, չի բեւեռում իւր վրայ իր միաբանութեան հարցը: Ինքնին զուրկ է և՛ իղէալից, և՛ իր ահաւոր պաշտօնի համապատասխան անակաւթիւնից ու բարձր ստորագիծերից: ապրում է Ալբիոնի հպարտ գաւակի պէս, փառահեղ առանձնութեան մէջ... Ինքնագոհ իր «զգալու» քաղաքականութիւնից, ու բոլոր գործերի տնօրէնութիւնը թողնելով հայկական երբեմնի ազատամիտ կոչեցեալ անձեռնաճառ և պաշտօնների մէջ լոկ իրենց օմեծութիւնը փնտրող և սրբտով միանգամայն աշխարհամիտ վեղաբաւորների քմահաճոյքին:

Թող Ձեզ, Էջմիածնով հետաքրքրուողներին և ազգին չխաղեն բնաւ տարբարաւ կոնգրեսների համարների աւելանալը: Իրանք տնօրէն կանցեւարիւկան գործեր են, իրենց արտաքին և բեկլամային շրջքով:

Գործ, ստեղծագործական աշխատանք, վերանորոգութիւն բնաւ չկալ ու չի կարող լինել Էջմիածնում, երբ չկալ այստեղ մի կարող ձեռք, որ ամեն մի միտքների իր ուժի համապատասխան դերի մէջ դնի, գրականութիւն ծաղկեցնի, առաքելութիւն պատրաստի, մեռնող հայ եկեղեցու բարեկարգութեանը ձեռնարկէ, և առաջ բերէ մի եռուն կեանք՝ հայութիւնը ոգեւորող, հայութիւնը ազնուացնող ու բարձրացնող:

Պատմական Էջմիածինը վաղուց է նըսեմացել: Պէտք է քանդել ներկայ Էջմիածինը և մի նորը շինել նոր, անքուն ու անխոնջ կերպով ժողովրդական պէտքերի համար խորհող, ամեն գործի վրայ իր հզօր դեկավարողի ինքնատիպ դրոշմը դնող, գիտնականութեամբ ու հոգեւորութեամբ ամենքից բարձր կանգնած արժանավայել մի Դիտապետով, նոր միաբանական կազմով, նոր առաքելներով, որոնց պէտք է առաջնորդէ ոչ թէ ամբողջ, ոչ թէ «հայրավարի մամուլը», այլ իրենց կոչումը և եկեղեցականի իրենց անալալ հաւատը:

Չնը հայոց ազգը և և հայ լրագրութիւնը աչքերը լսած Ս Էջմիածնի վըրայ, այստեղից է սպասում իր լուրը, լուր և փրկութիւնը, որովհետեւ այստեղ որջացած «արեւակրօն» հայերը իրենց գրականից, ստամոքսից և ուրախ ժամանցներից բոցի ալլ նպատակ, ձգտում և մտորում չունեն:

Ժողովուրդ, ազգային շահ, եկեղեցական բարեգարգութիւն... խորթ են

այս մարդոց հոգուն: Փառամոլութեամբ և աշխարհայնութեամբ տագնաւած Էջմիածնի «միաբանութիւնը» չհասկացաւ իր դերը, չգիտակցեց Էջմիածնի պատմական նշանակութիւնը, ընթացաւ փողոցի աղմուկի յետեից ազատամիտ երեսալու համար, ջլտեց իր ոյժերը, խորտակեց Էջմիածնի հեղինակութիւնը և այսօր մնաց մի ծանր բեռ ազգի վրին, խորտակեց զժողովուրդ իր մէջ՝ ի գալթակողութիւն ազգի:

Ներկայի Էջմիածնից և այստեղի պորտաբոյժներից թող ազգը «չինչ չսպասէ»: Մի դիտալ, նեղսիրտ և ինտրիգան միաբանութիւն, որ Զաւիկ-Ջորջնէքն իսկ ւցեցեմսերով է իրար շնորհաւորում, էլ ինչ քրիստոնէական սէր, մաքուր սիրտ կուեննալ իր մէջ և իր ուր ստորգեղեցիկներով զինւած՝ նա կարող է առաջնորդ լինել այն ժողովրդին, որ մէջ նոյնպէս քրիստոնէական սէրը մարել է, հաւատը ստոյլ և բարոյական ոյժերը քայքայուել:

Օ՛, Տարօրինակ է այստեղի մթնոլորտը, լոյժ ճնշող և հեղձուցիչ: Պատրաստուած ոյժերը լքուած, հեռացած, փախստական, իմաստակներն ու անձեռնհասները տէր ազգի ճակատագրի: Չորս կողմը բարոյական անապատ, լճացում և մեռելութիւն:

Միայն Ձեր «Միտք»ն է, որ զարմում է այստեղի կեանքը: Նա գործող ազդեցութիւն է թողնում բոլոր նրանց վըրայ, որոնք բաղդի մի գարմանալի խաղով, տէր են այսօր Էջմիածնում, իսկ հայաժողովներին և հանգստեան մատուածներին նա միտքարանք է պատճառում: «Մշակութեան» աւելի են հեաաքքւում Ձեր «Միտք»-ով և ակնդէտ սպասում, թէ երբ կգալ նա և ի՞նչ պատգամներ ու մաքրագործման հովիւ կբերէ հետը:

Վեհ եղբայրը իր ընտանիքով եկել է վանք եղբորը ժողովարանում համար, այլ, իրօք՝ գլուխ պահելու և շրջապատողների պակասը լրացնելու: Կարապետ որբազանը, Մաքսուտեան վարդապետը, շգիտեմ ինչո՞ւ և ինչպէս եպիսկոպոսացած եփրեմը գնալու են հանքային ջրերը—Պետիգորակ:

Մարդիկ Ձեզանում, կարծում եմ, ոյնքան չեն վախենում Ձեր տեղական իշխանութեան մասին խօսելուց, որքան վախում և որտապատում են լինում խեղճ միաբաններն այստեղ՝ Ֆիկիւլ, բայց և իրական վեհափառիկ Բագրատի*) մասին:

*) Մեզ համար մնում է անհասկանալի, թէ ինչպէս զանգուում և սկզբներում էլ «Միտք»ում Սպահանից իր մասին լաւ խօսել տուողը հ. Բագրատը Էջմիածնից իր մասին այսքան բացասաբար արտայայտուողներ ունի:

Այս անգամ բաժանել են, հրեա ի նկատի
ունենալով ներկայ անտարբերութիւնները
Այս անգամ 1 ձայն արուել է Էնդելուէն,
1 ձայն Լայիթմանին, 1 ձայն Մասալին,
3 ձայն Ռաշտին իւր շրջակայ գիւղերով:
Ռաշտի ընտրութեան ցուցակում կար
նաև Պարսկաստանի դեմոկրատ կուսակցու-
թեան Լիդր Սուլէյման Միրզի անունը,
հազար 300 ձայն ստացաւ: Նա, որին
ժողովուրդը ձանաչում է անցիայից, նրան
սեւացեալ է, իսկ սարգայներին ընտրում
Տիմոզոն էլ նշանակութիւն ունի այս եր-
կրում:

Նախնորէն Գիւրիի պատգամա-
ւորները Հէնց երկու սարգայներ պիտի
լինեն, զոնէ Էնդելին արամապրութիւն չի
ցոյց տալիս պատգամաւոր տալու: Ընտրու-
ած պատգամաւորներին Սարգար Ման-
սուրը Պարսկաստանի պետական կեանքի
մէջ մտնող երկրին յայտնի է եղել որպէս
սահմանադրական՝ 1907-8: Այդ օրերին
նա առաջին մէջ իր սահմանադրական
միակետի օրով փոստ-հեռագրատան նա-
խարարի պաշտօն ունէր: 1908-ին, հրը
Մասալի Այի Մաշը գաղտնի յարաբերու-
թեան մէջ էր Մաքուի սարգարի և նման-
ների հետ և պատրաստուած էր Մէջիսը
ցրել, Սարգար Մանսուրը միակետի սար-
քած դաւադրութիւնները յայտնի էր
սահմանադրականներին: Ըստ իւր ծրագրի-
րը իրագործելով, Սարգար Մանսուրին
բռնեց և ուղարկեց Երսուկ, 100,000 թու-
մանի փրկանք ստանալու պայմանաւ սպանել
չը տուց: Սարգար իրան ձգեց Ռուսաց
գեներալատուրը, այդպիսով իւր կեանքը
պահուեց: Միակետի գաղափարը հրաման
արձակեց և Սարգարի կայսրապետին զրա-
ռուեցին: Նա Ռուսաց գեներալատուրը բռն-
դարձրուած միջոց մինչև որ Քաւրիի շար-
ժու միջոց սկսուեցին: Սարգարի հա-
մար փրկութեան ծանաղագրէ չկար, բացի
Ըստ իւր պայտումը և այդ ուղղութեամբ
մարդը մեծ գոհակցութիւններ արու-
եց: Գիւրիի արտաստութիւնը նրա ծրագրով
է պրոֆէսորները պատճառ դառնի Մաշի
տապալման: Այդ ժողովից յետոյ մեզ հա-
մար մինչ օրս հանկուկ է մնացել թէ ին-
չու Մաշի տապալումը յետոյ Սարգարը
որպէս հաշտուած՝ անցաւ Եւրոպա, 3
ամիս ստաց Վերադառնալով այժմ իւր
հպատակների քրէնով պատգամաւոր է լի-
նում:

Սարգար Մոհամմադը տանկակ տա-
րիներ Ռաշտում իր նահանգապետի
պաշտօն է վարել, երբ հրաժարեցրիւ են
պաշտօնից կամ զրկել են որ և է նահան-
գապետի: Նա ևս կալուածներ շատ ունի:
Երկուսն էլ Սիփէհատուրի կուսակցութեան
անդամ են և էջմիզայիներին բարձր կըր-
թութիւն չունեն բացի տիտղոսներից:

Պրոյեկտ

Լ Ո Ւ Ր Ե Ր

ԹԱՐԻԳ

Թաւրիգում թէ գրաւոր թէ բերա-
նացի շատ քաղաքացիներ մեզ շնորհա-
կայութիւններ են յայտնել: Կծարիտէի
Իւրմիւն մեր տուած պատասխանի հա-
մար:

Ամսիս 7-ին, շաբաթ, ժամը
10-ին, Թաւրիգի Թիֆլիս մեկնեց թեմիս
առաջնորդ Կ. Ն. Վ. Մեղիք Թանգեանը,
թեմական դպրոցի գրամների վերջնական
կարգադրութեան համար:

Մեզ հաղորդում են, որ հա-
ժարութեամբ պ. Գալթեանի տեղ թեմակա-

նի հոգաբարձութիւնը արդէն տեսուչ է
հրաւիրել Լիւաի դպրոցների նախկին
տեսուչ պ. Պիտեանին: Ընտրութեան ան-
լաջող է և ճնշող տպաւորութիւն է թու-
ղել քաղաքացոյ վրայ:

Արամեան դպրոցի հոգաբարձութեան
նախագահ Գր. Վահան Գէորգեանը և պ.
Ա. Տ. Պարսկաստանը Արշիւում կարողացան
հաստատել դպրոցի սեփականատիրութեան
իրաւունքը Վարդգարի դպրոցական կալ-
ուածների ալ մասի վրայ, որը ոմն Բա-
հմադին Բի Քանի տարիներէից ի վեր
բռնադատուել էր: Արգարութեան վերա-
կանգման պիտի գտնարին զորքում բարո-
յական մեծ աշակցութիւն է ցոյց տուել
հոգաբարձութեան Արշիւի նախագահ պ.
Մամբաղ-Էլ-Մամալէքը, որ արժանի է
ընդ շնորհակալութեան:

Պարսկաստանի նպաստի վեր-
ադասն համար Յունիս 8-ին, երրորդ
անգամ լինելով, Արամեան դպրոցի հո-
գաբարձութեան պ. Յովհաննէս Տէր Թով-
մասեանը և պ. Ա. Տէր Վարդապետը ներ-
կայացան Ասորականների ֆինանսների
կառավարի Բէլճիկայի պ. Մօլթոսին,
պատճառաւորները դպրոցի նեղ կացու-
թիւնը և խնդրեցին պ. Մօլթոսի միջ-
նորդութիւնը կենտրոնական կառավարու-
թեան առաջ՝ որ շուտով զրկուին երկու
տարուայ լիտենայ նպաստները՝ արդէն
600 թմ. բաց ունեցող դպրոցին: Պ.
Մօլթոսի ընդունելութիւնը և խօսակ-
ցութիւնը շատ սիրալիկ էր և յարգաւոր-
պարտը առաջարկեց հոգաբարձութեան մի
պատճառաւորներով պատասխան գրել, որ
իւր միջոցով զրկուի Թէհրանի նպաստա-
ւոր կարգադրութիւն:

Յունիսի սկիզբներից Արամեան
դպրոցի հոգաբարձութիւնը արդէն ոկսել
է ներ թատրոնի կառուցումը: Թատրոնը
պէտք է տանէ 400 աթոռ. կուենայ ալ
և ձախ կողմերից լոծաներ, գալթեյա և
Փօլէ:

Այս անցած ուսումնական տա-
րում Արամեան Ս. Աննայի երկու դպ-
րոցների գ. դասարանն աւարտեցին 1)
Բարիտոգրաւան Երանուհի (Ագուլեցի),
2) Բուզադեան Ստեփան (Սալմաստեցի), 3)
Գուրգեան Մամուէլ (Ռումեցի), 4) Միքա-
լէյան Աննիկ (Թաւրիգեցի), 5) Յովհան-
նիսեան Սիրանուշ (Թաւրիգեցի), 6) Ներ-
սիսեան Արտաշէս (Մարագոցի), 7) Տէր
Յակոբեան Լորամայր (Թաւրիգեցի), 8)
Տէր Յակոբեան Փառանձաւ (Թաւրիգեցի):

Քաղաքի ազգային երեք դպրոց-
ների սկստերի ժամանակ տնտեսական հա-
շիւ ներկայացրեց միայն Արամեան դպրո-
ցը ի դէմս պ. Ա. Տէր Պարսկաստանի.
Երկուսի պատճառներով միւս երկուսի
հաշիւները պատրաստ չէին:

Մեզ հասած տեղեկութիւնները
ցոյց են տալիս, որ Ռաշտի փողոցները օ-
րինակելի մաքրութիւն ունեն. միայն
Թաւրիգն է, որ քաղ է գալիս դարձաւ
փոշու ու կեղտի մէջ: Նորահարստ տա-
լադի լուրջ աշխատութիւն ենք հրա-
ւիրում ընդհանրապէս ողջ քաղաքի և
մասնաւորապէս շատ բանակ փողոցներից
Սամսոն խան մէջիցի մինչև Էլեմսոնի
գիւմաց, Կեանքի փողոցից-Ռուսաց կիււրի
կողմերը, փշտների տակից մինչև կեն-
տրոնականի կողմերը, ապա փոստատնից
մինչև Եւջիկայի վերջը և Արքի փողոցը:
Ժամանակ է նաև քաղաքն ազատել 100-
աւոր շներէից, որոնք անասելի տնտա-
րութեան պատճառ են և օսկայի փոր-
ձաւը՝ գիշերը երթեկողների գլխին:

Քանի օր է միս չի ճարուած բա-
զարում, այն ինչ ամեն տարի այս օրե-
րում միս խիտ առատ կլինէր:

Մեզ հաղորդում են, որ Թաւրիգի
հայոց Աղբատախնամ ընկ. վարչ. Յամ-

կայ ժամանակը յաջած լինելով՝ տոջի-
կայ կիրակի ամսիս 22-ին տեղի է ունե-
նալու ընդհ. ժողով՝ տեղեկադիրը լսելու և
վարչ. նոր անդամներ ընտրելու օրակար-
գով:

Ամսիս 9 և 10 ի անձրևները բա-
ւական զովայրին եղանակները Թաւրի-
գում Գարգին ամառանոցային հիւանակներ
են Թաւրիգում և անգամ ցրտեր են լի-
նում:

Ճէլիկայի հիդրոգր. խեղդի և
ըջիկ տարի է մի թուրք կնոջ:

Բարդիան գին. Նահ. հ. Զոթա-
կը-Դովի հրամանով ամսիս 12-ից կար-
գադրիլ է, որ քարին ու արշիւները տա-
նեն բարդիա կնքի տալու, որպէս զի
հասարակութեանը շխարին պակաս բան
կշտիով կամ պակաս արշիւով ձոթեցին
ձախիով Ողջունում ենք այս հասարա-
կագուտ կարգադրութիւնը:

Ամսիս 9-ից օտարահպատակի-
րեն ևս ենթարկուեցին օդիվաճառու-
թեան նոր կարգադրութեան:

ԱՅՐԱՅԻՆՈՒԹ

Մարդային մեզ յայտնում են, որ
դպրոցի հարցը դարձաւ անորոշութեան
հանգէպ է մնացել առաջիկայ տարուայ
համար:

ԱՅՐԱՅԻՆ

Տաճկահայոց գլխին փորձանք դա-
ւած յայտնի Սարգիսեան հարցը լուծու-
համար՝ ազգային ժողովի կողմից՝ նախ-
կին պատրիարք Օրմանեան արդէն զր-
կուել է Երուսաղէմ Թէքէեանի և այլոց
ուղեկցութեամբ:

Մշակիւն հաղորդում են Երզը-
րումից, որ Նոր-Սանտարեանի Ուսում-
նարանի տնօրէն (Գաշեակց) տարեկան
ակտը չի կայացել՝ հասարակութեան
հակակրանքի պատճառով: Նոյն դպրոցի
նոյն ղեկավարների կազմակերպած Վար-
դանայ տունի ևս չհամակող հասարա-
կութիւնը չգնալով՝ հանգէպ տեղի չէ ու-
նեցել:

Էնդելուց մեզ հաղորդում են, որ
Կիլիկիոյ կաթողիկոսի սարկաւազը Մայիս
5-ին տեղ հասնելով, մի գիշերում հան-
գանակել է 75 թմ. և լաջող օրը մեկ-
նել Ռաշտ-Վաղարշապէս:

Մշակում տպուած էր Գալթե-
րական ամենաորոշում ուկազ Ելմիած-
նում ամբողջ երկու տարի պարապ պահ-
ուած առաջնակարգ գիտնական և հայ
եկեղեցական ամենախոշոր գէմք Կարա-
պետ եպս-ի Դամախի թեմի առաջնորդ
կարգուելու մասին: Ենթահարում ենք
սրբազանի հաստատութիւնը:

Երեւանում Մարքսիստական ուղ-
ղութեամբ կարողապէս հրատարակուող
«Կոստ» շաբաթաթերթը, իր № 17-ի ա-
ռաջնորդողի պատճառով տա ժամ գաղա-
րեցուել և խմբագիրն էլ բանդարկուել
էր: № 21 կիսահամարը լայնում է
խմբագրի ազատութիւնը բանդից 3000
րուբլու գրանականով:

ԱՅՐԱՅԻՆ

Ռուսաց Գալսրը օգոստոսի տնտա-
նօք լուծիս 1-ին ալցել է Բուսանիոյ
Կոնստանդու քաղաքը և տեսակցել Կարլ
Թաքաւորի հետ:

ԱՅՐԱՅԻՆ ԿԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

Այրաւիոյ դրութիւնը շափազանց
խառն է: Մղում է ամենակատարի կու-
թիւնը Վիգի կողմնակիցների և ապր-
տամբների միջև:

Բուպե առ րուպե սպասուած է
լոյն-թրքական պատերազմի հրատարակ-
ման. յարաբերութիւնները երկուստեք
հասած են լարման ամենաալիքոյն տա-
տիճանին:

Իտալիան ապրում է ամենալու-
գումայից րուպէներ, համատարած ահեղ
գործադուլի պատճառով:

Հ Ե Ռ Ա Պ Ի Ր

Ամսիս 9-ին, գիշերուայ ժամը 10-ին,
մեզ յանձնուել է հեռուկա հեռագրերը, որ
մենք նոյնութեամբ դնում ենք ալջամիս
հասարակութեան գնահատութեան սեղա-
նին:

Թէհրանից Թաւրիգ 22 Յունիս

Մկրտիչ Սահակեան կօղէ Մկրտ
Թաւրիգ

Չգում ենք կարողալով հայհոյանքով
լիք անմիտք առարկալը. անմիջապէս դա-
դարեցնել Յովակիմեան հասցէին ՎԻՄԵՔ-ի
առաքումը:

Լեւոն (???) Ե. Ի.)

Մեզ անյայտ և անձեռնօք տնձ պ.
Լեւոնի ալս. հեռագրերը մեզ ընաւ չի դար-
մացնում: Մարդիկ, որոնք երգում են
անպայման մաժուներն սև աւել և զար-
հուրում են ճշմարտութեան արեւի ծա-
ղոթից և թայֆայական աղնոցներ ու
ինտուիթիւն ոգի ունեն, այսպէս կար-
գաւեն ու բնագաղափար խօսքը նրանց
հայհոյանք կթուալ: Այդ մահացու անուղ-
ղայնութիւնը բուժում չունի. և եթէ կան
մարդիկ, ոնենք չեն խղճահարուել կոնստան-
դապոլիտները, ապա մենք դրանք չենք
ձգել. ք. որ ոտքի կոխան անել հայկական
փարիսեցիները:

Ընդգիւմադրներէից, մանաւանդ թայ-
ֆայականներէ, և գիտեց ինչու, փաղա-
քուշ խօսքեր լսելու արժանի էլք Ընդգիւ-
մադրների արտայայտութիւնները թէ
ժանր, կժու. ու խորտակել, այնուամենայ-
նիւ դրանք հայհոյանք չեն: Պ.Լեւոնի և մեր
խիկարների կարծեքով, ք. ընդգիւմադրներ
Միւլիկով, Չիլիէ և այլն հայհոյողներն
են, որովհետեւ դաւանադոյն դարձուած-
ներով բնագաղափար են Պետ. Դումայում,
էթն. օպիօնիզմ, կիւմուլարութեան Դ
միլիտարիստիկանց գործունէութիւնը Բայց
առ այժմ այսքանս բաւ է:

Պ Օ Ս Տ - Ա Ր Կ Ղ

Թաւրիգ. — Մարենէին — 26ր հասնաւորը յա-
ջորդել:

Էլմիսից. — Գրեգոր-Դերենիկին — 26ր յօդ-
ուածը յաջորդել:

Արդաբիլ. — պ. Տ. Մհ. Առաքանին — 25
դա. 26ր բաժնեգէրն արդէն
ստացուած է:

Վաղարշ. — Մ. Դ. — 26ր պատասխանն էլ
յաջորդել:

Խմբագիր-Հրատարակիչ

Ա. Տէր-Վարդապետ